Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lin
N 102

1999

ԱՇՄԷԴԻ ՏՈՊՐԱԿԸ

ԱՐԻԵԼԵԱՆ ԶՐՈՅՑ

ԹԱՐԳՄ.

ԵՓՐԱՆԴԱՅ ԼԱԼԱՅԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ ՄՈՎՍ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵՒ ԸՆԿ.
1881

ԱՇՄԷԴԻ ՏՈՊՐԱԿԸ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԶՐՈՅՑ

ԹԱՐԳՄ.

ԵՐՈՒԱՆԴԱՅ ԼԱԼԱՅԵԱՆՑ

1678.

Լ Բ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ ՄՈՎՍ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԷՒ ԸՆԿ.
1881

Հայոց Գրականության Ազգային Գրադարան

Дозволено Цензур. Тифлисъ. 15 Мая 1881 г.

Тип. М. Вартанянъ и К°, Тройц. пер. д. № 11

4102-60
Հ8 107

ԶՕՆ

Կը ձօնեմ այս՝ իմ եղբայրակից Հայ պատանիներին, յորդորելով, որ նոքա եւս, Ահմէդի նման, աշխատեն լցնել իւրեանց տոպրակը պիտանի իրերով։

Ե. Լ.

Ե. Լ.

ԱՀՄԷԴԻ ՏՈՊՐԱԿԸ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԶՐՈՑԵ

Մի տօնավաճառի օր, Բաղդադ քաղաքի վաճառանոցում, ժողովրդի խառն բազմութեան մէջ երեւեցաւ մէկ մարդ, որ գրաւեց ընդհանուր ուշադրութիւն։

Նորա հանդերձը չափազանց հարուստ էր ու շքեղ. բայց զարմանալին այն էր, որ նորա ձախ կողքից կախ էր արած մի հասարակ մոխրագոյն տոպրակ, իսկ աջ կողքից—մի կաշուի քսակ՝ ոսկւով լիքն։

Այս մարդը, որ վաճառանոցի մէջ ոչ ոքի ծանօթ չէր, մի վսեմաշուք ու աղդու կերպարանք ունէր։

Կրպակներից մինի առաջ կանգ առած՝

երկար մտածում էր նա. վերջապէս մօտ գնաց, ընտրեց մի ամենափափուկ գորգ, գնեց եւ հրամայեց ծալել։ Վաճառականը կատարելով գնորդի ցանկութիւնը, զարմանում էր թէ ինչպէս նա, այնքան հարուստ ու շքեղազգեստ մարդն, առանց ծառայի էր եկել վաճառանոց իրեր գնելու, եւ առաջարկեց ուղարկել գորգը նորա տունը իւր ծառաների ձեռքով։

— Ո՛չ, հարկաւոր չէ,—պատասխանեց գնորդը, վճարելով նորան փայլուն ոսկէ դրամներ,—ես ինքս էլ կը տանեմ։

Ասաց եւ ծալած մեծադիր գորգն առաւ ձգեց տոպրակի մէջ։ Յետոյ անփոյթ առնելով իւր բեռի ծանրութիւնը եւ շրջապատողների զարմանքը՝ գլուխ տուաւ վաճառականին ու յառաջ անցաւ։

Որչափ առաջ էր գնում վաճառանոցի շարքերով՝ այնչափ աւելի էր ցանկանում ձեռք բերել ամեն տեսակ իրեր։ Սկզբում գնեց ու տոպրակը ձգեց տաներկու

սրուակ վարդի իւղ. քիչ առաջ գնաց՝ այնտեղ էլ գնեց տասն ֆունտ ամենալաւ ծխախոտ եւ մի ամենագեղեցիկ սաթէ ծխաքարշ. դոցա վերայից անփութութեամբ ներս ձգեց մի փայտեայ սեւ ծանր արկղ։

Արդէն շատերը նկատել էին անծանօթին եւ հետաքրքրութեամբ նայում էին նորան։ Մի շատ յարգելի մարդ երկար զննում էր այդ օտարոտի գնորդին, եւ երբ տեսաւ որ նա մտաւ վաճառանոցի ամենահեռաւոր խորքը, որտեղ ծախվում էին աւելի թանկագին իրեր, եւ սկսաւ գնել մարգարիտ, մի քանի տակառ լաւագոյն սուրճ, կծիկ կծիկ մետաքսեայ թել, ձուկն, մատանիներ, ապարանջաններ, ժամացոյցներ, թամբեր, ադամանդներ, տեղաւորելով այս բոլորը տոպրակի մէջ, այն ժամանակ նորան հետեւող ամիրապետը, որ էր Բաղդադի կառավարիչը, էլ չհամբերեց եւ ասաց.

«Շատ հրաշքներ եմ տեսել ես կեան-

քիս մէջ, բայց երդվում եմ մարգարէի մօրուքով որ դու ինձ զարմացնում ես։ Ես ահա շարունակ նայում էի, եւ մտածում եմ, թէ ի՞նչպէս է որ քո այս տոպրակը դեռ չէ պատռուել։ Ի՞նչպէս ոյժդ պատում է կրել նորան։ Ի՞նչ պէտք է անես, եթէ քեզ հարկաւորի հանել մինն այն հազարաւոր իրերից, որ այդ տոպրակի մէջն ածեցիր։ Ի՞նչպէս պիտի գտնես . . . Եւ ի՞նչ դրութեան մէջ կը լինին այդ տոպրակի մէջ այն քնքոյշ մարգարիտները, որ կը ցանկայի գնել դստերս Զիւլիէի համար, բայց չկարողացայ, որովհետեւ շատ թանգ էին...։

Ահմէդը, (այսպէս էր անուանվում անծանօթը) լսելով ամիրապետի խօսքերը, ձեռքերը դրեց կրծքին եւ խոնարհաբար գլուխ տալով ասաց.

— Ա՜հ, այս դո՞ւ ես, պատուելի ծերունի, ես իսկոյն ճանաչեցի քեզ քո պատկերից, որ գտնվում է տոպրակիս մէջ։

Երբ որ ես Ֆրանգիստանումն *) էի՝ այն ընծայեց ինձ մի նկարիչ։

Այս ասաց եւ արագութեամբ ձեռքը կոխեց տոպրակի մէջ, դուրս հանեց երկու մեծ շարոց մարգարիտներ եւ տուաւ ամիրապետին։

— Ինչ որ պատկանում է ծառայիդ, քեզ է պատկանում, ասաց նա։ Շնորհ արա՛ առ այս շարոցը եւ թո՛ղ կրէ քո կինը։ Ես դորանով չեմ աղքատանալ, հանդարտութեամբ աւելացրեց նա։

Ամիրապետը Ահմէդի քաղցրալիր խօսքերը հաճութեամբ լսեց ու առաւ մարգարիտները, մեծապէս զարմանալով իւր խօսակցի հարստութեան եւ ճարպիկութեան վերայ։

«Նստենք այս աղբիւրակի մօտ,—ասաց

---

*) Այսպէս են կոչում Արեւելքում Եւրոպան։

Ահմէդը՝—ես կը պատմեմ քեզ իմ եւ իմ տոպրակի մասին։»

Այս ասելով նա փռեց փափուկ գորգը՝ տոպրակից հանեց ծխաքարշը՝ լցրեց եւ տուաւ ամիրապետին։ Յետոյ երկուսն էլ ծալապատիկ նստեցան՝ ինչպէս նստում էին նախկին մարդիկը՝ եւ ինչպէս մինչեւ այս օր էլ նստում են Արեւելքում՝ որտեղ աթոռներ քիչ են գործածվում։

Ահմէդը սկսաւ իր պատմութիւնը.

«Ես մի աղքատ մարդու որդի եմ՝ եւ կարծես ծննդեանս րոպէին դատապարտուած էի աղքատութեան՝ բայց մի բարի հոգի՝ որ կանգնած էր օրօրոցիս մօտ՝ աղաչեց ինձ։ Նա տուաւ ինձ այս տոպրակը եւ այս քսակը։

«Մեծացիր՝ ասաց նա ինձ՝ Ահմէդ՝ եւ ուշի ուշով նայիր շուրջդ գտնուող բոլոր առարկաների վերայ։ Ընտրիր եւ գնիր ամենայն ինչ՝ որ քեզ դուր կը գայ

եւ վճարիր իմ քսակից՝ որ երբէք չի դադարկուիլ.—իսկ գնուած իրերը ածա՛ այս տոպրակի մէջ՝ նա երբէք չի լցուիլ։ Բայց նայիր՝ դորա մէջ ածա միմիայն թանկագին առարկաներ. այն ժամանակ միայն նոցա ծանրութիւնը քեզ չի յոգնեցնիլ։»

— Նորա խօսքերը կատարուեցան։ Ես կրում եմ այս տոպրակիս մէջ աւելի քան թէ նա խոստացաւ. սորա մէջ անվնաս պահպանվում է այն ամենը՝ ինչ որ կեանքիս մէջ որ եւ է ժամանակ սիրել եմ՝ կամ երբ եւ իցէ ունեցել։ Եւ երեւակայիր որ բոլորն էլ այստեղ է առ ձեռն պատրաստ . . .

— Յանկանում ես տեսնել այն առաջին սուրն՝ որ հայրս սովորեցրեց ինձ գործածել։ Ահա՛ նա՝ նայիր։—Նա արագութեամբ հանեց սուրը տոպրակի խորքից։—Սա բոլորովին հասարակ՝ անզարդ է՝ բայց սորա ծուռ երախիկը այժմ էլ փայլում է այնպէս՝ ինչպէս ա-

ռաջին օրը՝ երբ ինձ տուին նորան,— եւ այս ուրախացնում է իմ ծերացած սիրտը։ Դու կամենո՞ւմ ես՝ տեսնել այն Սուրբ Գիրքն՝ որի վրայ կարդալ եւ մտածել սովորեցրեց ինձ բարեպաշտ Աբդուլլահն։ Նայի՛ր՝ ինչ պայծառ են այս քընքոյշ—ծիրանեգոյն տառերը՝ ինչպէս շողշողում են այս ոսկեզարդ ծաղկագրերը։

— Յանկանո՞ւմ ես լսել այն երգն՝ որ յաճախ երգում էր կինս՝ երբ նշանած էր ինձ՝ շարունակեց Ահմէդը՝ եւ տոպրակի խորքից՝ կարծես մի հեռու տեղից սկսաւ հնչուիլ մի զմայլեցուցիչ քաղցրաձայն մեղեդի։ . . .

Երկու խօսակիցները նստած էին լուռ եւ սաստիկ յուզուած։

«Ինձ թւում է թէ այստեղ վարդի հոտ է բուրում՝—ընդհատեց լռութիւնն Ամիրապետը։—Իմ բարեկամ՝ քո վարդի իւղի սրուակներից մինը կոտրուած չլինի՞։

Դու այնպէս անփութութեամբ ածեցիր նոցա քո զարմանալի՝ անյատակ տոպրակի մէջ։

— Ո՛չ՝ պատասխանեց Ահմէդը դողդողջուն ձայնով՝ իմ բոլոր սրուակներն անվնաս են։ բայց դու էլ չես սխալվում՝ այստեղ յիրաւի վարդի հոտ է բուրում։ վասն զի միշտ ծաղիկների հոտը կցորդ է այս հին երգին։ Ահա՛ նշանածիս ինձ պարգեւած ծաղկափունջը։ Նայի՛ր՝ նորա միջի վարդերը չեն թառամել մինչեւ հիմայ։

Նա ցոյց տուաւ փունջը ամիրապետին եւ յետոյ նորէն դրաւ տոպրակի մէջ։

— Զարմանալի՞ է եւ չափազանց օտարոտի՝ ասաց ամիրապետը՝ շարունակիր պատմութիւնդ՝ իմ բարեկամ։

«Իմ պատմութիւնս երկար չի տեւիլ՝— պատասխանեց Ահմէդը։—Դու այսօր զարմանում էիր՝ որ ես վաճառանոցում այնպէս հապճեպով ժողովում էի զանազան

իրեր. բայց ինչպէս մեծ պէտք է լինէր քո զարմանքն, եթէ տեսնէիր ինձ դեռահաս ժամանակս, երբ ամբողջ աշխարհն երեւում էր ինձ աւելի պայծառ գոյներով. երբ հազարաւոր իրեր գրաւում էին ուշադրութիւնս եւ իմ ձեռքս համարեա անդադար քսակից տոպրակը էր մտնում, տոպրակից քսակը . . .

Ի՞նչ պէտք է ասէիր դու, եթէ տեսած լինէիր ինձ այն ժամանակ, երբ ես սկսայ ճանապարհորդել հեռու աշխարհներ, ծովեր ու անապատներ անցնել, լռիկ ու մեկուսի գիւղերի, կամ մեծ քաղաքների մօտով եւ գնում էի ճանապարհին ամենայն ինչ, որ դուր էր գալիս ինձ ու ձգում լայնարձակ տոպրակիս մէջ։ Եւ յիրաւի տոպրակս կարծես ինքն իրան լցվում էր։ Զքնաղ, գոյն զգոյն թռչնիկներ, քնքոյշ զմայլեցուցիչ ծաղիկներ կարծես իրանք իրանց թրռչում, թափվում էին նորա մէջ . . . .

Սակայն անցաւ առաջին եռանդս . . . Երբեմն երբեմն տիրում էր ինձ մի տեսակ տխմար անտարբերութիւն եւ այդպիսի րոպէներում ես անվրդով, լուռ ու մունջ անցնում էի ամենագեղեցիկ առարկաների մօտից, ուշք չդարձնելով նոցա վերայ։

«Միւս անգամ էլ կը հանդիպի նոյնը» մտածում էի ես. բայց այդ դիպուածներից եւ ոչ մինը չէր կրկնվում այլ եւս, ինչպէս որ չէ վերադառնում անցկացած ժամանակը։ Այժմ շատ անգամ ողբում եմ այն կորուսած թանկագին րոպէներս։

Բայց ինչպէս հեշտ էր ինձ այն ժամանակ քաղել կապոյտ դիւթական ծաղիկը։ Նա այնպէս նաղելով լողում էր վճիտ ծովակի երեսին։ Ոչ մի արաբական բոյս շքեղութեամբ չէր կարող հաւասարուիլ բնութեան այս աննման բերքի հետ. ախ, ի՞նչ սքանչելի էին նորա ոսկեգոյն առէջները, նորա գոհարափայլ ցողունը,

նորա շավիւղեայ պսակը . . . իսկ նորա զմրուխտեայ տերեւների մեղմիկ սօսափիւնը,—միթէ կարելի՞ է համեմատել մի որ եւ է երաժշտութեան հետ . . .

Այժմ արդէն չորացել է այն անուշիկ ծաղիկն եւ միայն նորա մնացորդներն են ընկած ծովակի աւազոտ յատակի վերայ։

Ես կարող էի գնել հռչակաւոր «լուսալեառն» (քիւհինուր) կոչուած ադամանդը, որի մօտ իմ բոլոր լաւագոյն գոհարներն անպէտք քարեր են։ Ես կարող էի ձեռք բերել մի ամբողջ թագաւորութիւն,—այնտեղ, ձիւնապատ լեռների միւս կողմը, ուր կային պալատներ ու այգիներ, բնակաւէտ աշխարհներ ու ժողովրդներ, ձիանք ու ձիաւորներ, մարգագետիններ ու քաղաքներ։

Վերջին ժամանակներումս ես շատ անգամ փորձեցի այնտեղ վերադառնալ, բայց արդէն ուշ էր. ձեան հիւսերը կալել էին ճանապարհը։ Ես շատ ցաւեցայ, շատ գիշերներ անցկացրի անքուն, բայց այդ տեղ դառնալու անցք չգտայ ու չգտայ։

Այժմ ես շատանում եմ ունեցածովս. բայց այն էլ պէտք է ասել, որ փառք Աստուծոյ աշխարհը դեռ շատ մեծ է, ես էլ դեռ այնքան ծեր չեմ. անշուշտ կարող եմ էլի իրեր ժողովել, մանաւանդ որ սրտումս դեռ չէ մարել աւելի հաւաքելու ցանկութիւնը։

— Այս օր երբ ես մտայ պայծառափայլութեան քաղաքը գոհութիւն մատուցի տիեզերքի Արարչին, ըստ որում Նա մարդուն ընդունակ է արել ոչխարի կեղտոտ բուրդը այնպիսի բան դարձնել, ինչպէս օրինակ, այս գեղեցիկ գորգը, որի վերայ նստած ենք ես ու դու. գոհանալ որ Նա աճեցրել է ծովի աւազոտ ափում այս ճկուն եղեգն, որ այժմ տանում ես շրթունքիդ. որ Նա թագցրել-

1678.

է երկրի ծոցում ոսկի եւ ծովի կոհակների մէջ թանկագին մարգարիտներ. . .

— Ես յափշտակուած ու տաքացած առնում էի ուշքս գրաւող առարկաները, երբ դու քաղցրաշնորհ հայեացքդ դարձրիր ինձ վերայ. դիմելով ինձ քո ողորմած խօսքերով դու հասցրիր ինձ այն բանը, որ ես չէի կարող գնել երբէք ոչ մի դրամով,—այն է՝ քեզ հետ խօսելու պատիւն ու երջանկութիւնը։

— Հիանալի խօսեցար, իմ բարեկամ;— գոչեց ամիրապետը զմայլուած. խսկոյն երեւում է, որ դու շատ ես ճանապարհորդել եւ լաւ մարդկանց մօտ գտնուել։ Ի դէպ, Ահմէդ, պատմիր ինձ. անկասկած քեզ քաջ յայտնի է, որ մարգարէն,—գովեա՛լ լինի նա,—արգելել է մեզ նկարել մարդու որ եւ է տեսակ պատկեր, որ պատկեր է եւ նմանութիւն Աստուծոյ։ Այդ ի՞նչ անհաւատ շուն կարողացել

է նկարել ինձ այնպէս շուտ, որ ես ոչինչ չեմ էլ իմացել։

— Այնտեղ, Ֆրանգիստանում, այսպէս բաներում շատ վարպետ են, պատասխանեց Ահմէդը։

«Ճշմարիտ է, ճշմարիտ, մտայոյզ դէմքով արտասանեց ամիրապետը, բայց ցանկալի էր ինձ տեսնել իմ պատկերը։

— Համեցէք, ես քեզ ցոյց կը տամ այն, ասաց Ահմէդը, եւ ձեռքը կոխեց տոպրակի մէջ. երկար պտըտեց, բայց պատկերը չգտաւ։

«Հը՜, ի՞նչ է, ձայն արձակեց ամիրապետը սկսելով սրտմտել։—Մի գուցէ զղջացար խոստմանդ համար. կամ թէ. . .

— Գտա՛, ընդհատեց Ահմէդն, պաղատաբար շընչելով։ Ամիրապետը ակնաւ հետաքրքրութեամբ քննել իրան տուած արծաթաղօծ թերթը։

«Այս է՛ւ ես եմ, է՛ւ ես չեմ, ասաց նա շարժելով գլուխը.—ահա՛ իմ ֆէսը

կարմիր ծոպերով. ահա՛ ասղնեգործն իմ շորերի վերայ։ Բայց մի՞թէ ես իրօք այսպէս կատաղի եմ. եւ ո՞ւր է իմ այտերի թուխ գոյնը, աչքերիս փայլը, ո՞ւր է դէմքիս զուարթութիւնը . . .

Եւ, ի՜նչ եմ տեսնում, տես ինչպիսի խոր կընճիռներ են . . . իմ ոտքը բոլորովին բաժանուած է իրանից։ Ուրեմն սուտ ես խօսում, թէ իբր բոլոր առարկաները տոպրակիդ մէջ պահուած են անվնաս, եւ թէ մի բոպէում կարող ես գտնել նոցանից ամեն մինը։ Կարելի է նոցանից մի քանիսը բոլորովին կորած էլ լինին . . . աւելացրեց ամիրապետը ծաղրագին։

Ահմէդը կարմրեցաւ։

— Ես մի աղքատ մարդու որդի եմ, — ասաց նա դողդողուն ձայնով, — բայց դեռ մանկութեանս ժամանակ ես սովորել եմ երկու բան. — սուր բանեցնել եւ ուղիղ խօսել։ Ների՞ր ինձ, պայծառափայլ տէր,

եթէ յակամայիցս վշտացրի քեզ։ Մանկութեանս յիշատակներով յափշտակուած՝ ես չեմ նկատել, որ «բոլոր առարկաները», «աժեն մի առարկայ» ասելով՝ չափազանցութիւն եմ արել. ես պարտաւոր էի ասել. «առարկաների մեծ մասը», եւ այն ժամանակ սխալեցրած չէի լինիլ քեզ։

Արդարեւ, իմ տոպրակում գտնուած առարկաներից շատերը կորել են, բայց մեղաւորն ինքս ես եմ։ Պատանեկութեանս ժամանակ ես այնքան շատ իրեր էի գնում եւ դարսում էի այնպէս արագ եւ անհամբերութեամբ, որ շատ անգամ հէնց այն ժամանակ, երբ բաղմաթիւ նոր առարկաներ առնում ածում էի տոպրակիս մէջ, հիները, որոնց վերայ ես այն ժամանակ ուշք չէի դարձնում, դուրս էին թափվում, կամ տակը մնալով ճմըլվում, կոտրտվում էին։ Ամենամեծ կորուստ ու վիշտ ինձ վիճակուած էր կրել Ֆրանգստանում։

Անտարակոյս քեզ քաջ յայտնի է, որ այնտեղի վաճառականները մերոնց պէս չեն։ Նոքա մերոնց պէս լուռ ու մունջ չեն նըստում գորգերի վերայ, չեն թողնում գնողին երկար նայելու ապրանքին եւ մանրամասն քննելու նորա արժանաւորութիւնը եւ բերան բանում ինչպէս մերոնք, միայն նորա համար, որ ապրանքի գինն ասեն։ Այլ ե՛ւ գիտես որ մեր վաճառականները երկար չեն խօսիլ գնի համար, եւ եթէ գնողն երկար խօսակցութիւնից յետոյ հեռանայ առանց որ եւ է բան գնելու, նոքա չեն էլ շարժիլ տեղներից եւ մինչեւ անգամ դէմքի վերայ ոչինչ փոփոխութիւն չի երեւալ։ Իսկ Ֆրանգստանում այնպէս չէ. այնտեղ վաճառականը գովում է իւր ապրանքը շատ անամօթ ձեւերով, եւ զարմանքն այն է, որ ինչքան վատ է ապրանքն, այնքան աւելի կ՚սկսի գովաբանել։ Եւ ինչ հնարներ ասես, որ գործ չդնեն գնորդներ որ-

սալու եւ խաբելու համար. նոքա տեղական լրագիրների մէջ յայտարարութիւններ են տպում, իբր թէ ստացել են նոր ապրանք, (որ ստացած չեն լինում) եւ իբր թէ ծախում են առաջուան ապրանքները սովորականից աւելի արժան, եւ այլն . . .

Այն տեղի փողոցներով անցկենալիս՝ հազարաւոր յայտարարութիւններ կը տան քեզ։ Իսկ մի քանի վաճառատեղիներում վաճառականները կանգնեցնում են անցորդներին, եւ նոցա ձեռքն ընկար թէ չէ՝ էլ բաց չեն թողնիլ, մինչեւ որ մի բան չգնես նոցանից։

Այսպիսի հնարքներով ինձ ստիպում էին բոլորովին անպէտք եւ չնչին առարկաներ գնել, եւ ես ուրախութեամբ տալիս էի նոցա մեծ քանակութեամբ փող, որպէս զի շուտով ազատուիմ այն անտանելի մարդկանց ձեռքից. բայց այն բոլոր ապրանքները ես դնում էի տոպ-

բակիս եւ վերարկուիս մէջ տեղն, այնպէս, որ ամենափոքր շարժմանս ժամանակ նոքա կը թափուէին իրանց արժանաւոր տեղը—ցեխի մէջ. եւ իհարկ է ես երբէք կանգ չէի առնում վերցնելու նոցա։

Ա՜խ, երանի՜ թէ տոպրակիս մէջ գրտնուած իրերից մինը կարողացած լինէի ձգել ծովի ամենախոր անդունդի մէջ։ Բայց ո՛չ, ես հարկադրուած եմ կրել նորան մինչեւ կեանքիս վերջը։

— Ինչո՞ւ մասին է խօսքդ, իմ բարեկամ Ահմէդ, հարցրեց ամիրապետը յուզուած ձայնով. միթէ քո տոպրակում կա՞ն որ եւ իցէ վատ իրեր եւս։

— Կա՛ն։ Զորօրինակ, այնտեղ ես ունիմ մի քար, որ ես մէկ անգամ խփեցի մի անբաղդ շան, ասաց Ահմէդը դառնութեամբ։ Խղճուկը հալումաշ էր եղած, հազիւ էր կանգնում ոտքի վերայ, իմ հարուածը կոտրեց նորա ոտքը. նա վայր ընկաւ, նայեց երեսիս եւ—մեռաւ ...

Բացի սորանից,—շարունակեց Ահմէդն,—տոպրակիս մէջ է եւ մի դաշոյն, արատաւորուած ամենաթանկագին բարեկամիս արիւնով։ Փառք Աստուծոյ, որ մահաբեր չեղաւ հարուածս ...

Այս բոլէին փողոցում գտնուած ամբոխի մէջ իրարանցումն ընկաւ. մարդիկ յետ յետ ցրուեցան եւ հրապարակի ծայրում երեւեցան երկու ձիաւոր նստած հրաշալի արաբական ձիերի վերայ. նոցա յետեւից գալիս էր մի ոսկեզօծ քառաձի կառք։ Տեսնելով այս, Ահմէդը մոռացաւ իւր վիշտը եւ տեղիցը վեր թռաւ։

Անակնթարթ նայելով մօտեցող եկաւորներին եւ տեսնելով որ ամիրապետը նոյնպէս ոտքի ելաւ՝ նա առաւ դորգն ու ծխաքարշը ձգեց տոպրակի մէջ եւ բացագանչեց.

— Արդեօք, ո՞ւմ կարող է պատկանել այս փառահեղ հարստութիւնը։ Ա՛խ, ի՜նչ կը ցանկայի գնել այս։ Ի՜նչ գեղե-

ցիկ է ծառաների ծիրանի հանդերձը, ինչ յարմարում է նա լծուած մոխրագոյն ձիերի գոյնին։ Ի՞նչ սիրուն են ձիաւորների գունատ երեսները իրանց մանիշակագոյն մետաքսեայ շորերի մէջ. ինչպէս շողշողում են նոցա սեւաթոյր ձիանքը։ Ա՛խ, եթէ այս ամենը պատկանէր մի որ եւ է վաճառականի . . .

— Տարաբաղդաբար, Ահմէդ, սոցա տէրը վաճառական չէ, ասաց ամիրապետը, հանելով գրպանից ոսկեթեայ սուլիչն։

Հնչեցաւ մի սուր ձայն, եւ կառքը կանգնեցաւ այն աղբիւրակի մօտ, որտեղ նստել էին մեր խօսակիցները։

— Դու տուիր ինձ ամենագեղեցիկ պարգեւ, ո՛վ Ահմէդ, ասաց ամիրապետը, եւ որ աւելի նշանաւոր է, դու քո պատմութեամբ պատճառեցիր ինձ մեծ հաճութիւն։ Վ՚էր առ ուրեմն եւ դու ինձնից այն, որ այնպէս զմայլեցրեց քեզ, եւ այս օր իմ հիւրն եղիր. խոկ վաղը,

կամ երբ կամենաս նստիր այս կառքի մէջ եւ շարունակիր քո ճանապարհորդութիւնը։

Ահմէդը ձեռքերը դրաւ կուրծքի վերայ, խոնարհաբար գլուխ տուաւ եւ պատասխանեց.

— Քոյդ պայծառափայլութեան ողորմութիւնը նման է այն ցօղին, որ ծածկում է ծարաւի երկիրը, եւ եթէ ես խոստացած չլինէի հիւանդ բարեկամիս այցելութեան երթալ այս երեկոյ, ուրախութեամբ կը գայի քո մօտ։ Այժմ թոյլ տուր ինձ վեր առնել քո ընծան եւ մեկնել. միայն թէ այս վայելչագեղ ձիանքը եւ կառքը չպէտք է քաշքաշուին փոշելից ճանապարհներին։

Այս ասաց, եւ վերցրեց կառքը ձիանցով ու ծառաներով հանդերձ, ձիաւորներն ու իրանց արաբական ձիանքը, բոլորը դրեց տոպրակի մէջ, գլուխ տուաւ ամիրապետին եւ ուղղեւորուեցաւ դէպի քաղաքի դարպասը։

Ամիրապետը երկար նայեց Ահմէդի յետքից եւ յետոյ մտայոյզ գնաց տուն։ Նա կախեց իր դստեր վզից Իրան ընծայուած մարգարիտները, կանչեց ատենադպրին եւ ասաց.

— Վ.եր առ գրիչը եւ մի կտոր լաւագոյն մագաղաթ, գրիր ինչ որ կ'ասեմ։

Եւ սկսաւ թելադրել նորան ինչ որ գիտէր «ԱՀՄԷԴԻ ՏՈՊՐԱԿԻ» մասին։

—⁂—

Անկասկած ընթերցողներիս մեծ մասն արդէն հասկացաւ այս Արեւելեան զրոյցի միտքը։

Մի՞թէ մենք բոլորս էլ չպէ՞տք է զարմանայինք եթէ հանդիպէինք Ահմէդին. բայց միեւնոյն ժամանակ մեզանից ամեն մինն ունի ճիշտ մի այնպիսի լայնարձակ տոպրակ, ինչպիսին եւ նա . . .

Այս տոպրակը մեր յիշողութիւնն է,

որ ոչ մի ժամանակ չի լցվում, չնայելով որ մենք մանկութենից իվեր ածում ենք նորա մէջ այն ամենը, որ գրաւում էր մեր ուշադրութիւնը. եւ մեր քսակը— (հասկանալը— ընդունելը—ինչը)—երբէք չի դադարկվում։

Մենք մեր պարկում, ինչպէս եւ Ահմէդը, կարող ենք գտնել արագութեամբ մեր բարեկամի պատկերը, այն առասպելները, որ մեզ պատմել են երախայ ժամանակներն եւ ուրիշ հազար ու մի առարկաներ։ Ամպամած, անձրեւային օրերը մենք կարող ենք տեսնել արեգակի ճառագայթներով լուսաւորուած անտառներն ու դաշտերը, ուր մենք երբեմն զբօսնում էինք։ Երբ տխուր լինենք, կարող ենք ընտրել մեր տոպրակից մի որ եւ է քաղցր յիշատակով զուգորդուած մխիթարական բան։

Մեր տրտմութիւնը կը փարատուի այն անմոռանալի երգով, որ լսել ենք մանկութեան ժամանակ։

Մեր այս գանձն ո՛չ ոք չի կարող մեզանից խլել, եթէ մենք ինքներս չձգենք նորան մոռացութեան անդունդը։ Սորանից յետոյ զարմանալի չի լինիլ, եթէ որ այդպիսի մի երեւելի բարեկամի, որ տալիս է մեզ այնքան բարիք ու բաղդաւորութիւն, արժանաւորութիւնը չըհասկանանք։

Ի՛նչպէս յաճախ եւ ի՛նչպէս անվրդով ասում են մարդիկ. «Իմ յիշողութիւնս թոյլ է», կարծես թէ այս մի ոչինչ բան է։

Ընթերցողնե՛ր, կրկնում եմ ձեզ Ահմէդի խօսքերը. տոպրակը մեծ է եւ դիմացկան, իսկ քսակն անսպառելի։ Ահմէդը ասում է, որ դուք այժմ ապրում էք այն երջանիկ հասակի մէջ, երբ ամենայն ինչ երեւում է ձեզ ոսկեայ գոյներով։ Գնացէ՛ք ուրեմն համարձակ աշխարհային տօնավաճառանոցը. ձեռք բերէք այն բոլորն, ինչ որ ձեզ ախորժելի կը թուի եւ ինչ որ բարի մարդիկ խորհուրդ կը տան

ձեզ ձեռք բերել։ Գնելու համար ձեզ միջոց չի պակասիլ։

Անկասկած, ձեր ուսուցիչները չեն վարուիլ ձեզ հետ Ֆրանգստանի վաճառականների նման։ Հետեւեցէք Ահմէդի օրինակին եւ հեռացէք նորա սխալմունքներից։

Եթէ ուշադրութեամբ դուք կարդացիք մի լաւ գիրք՝ ուրեմն քաղեցիք հրաշալի, անուշահոտ, դիւթական կապոյտ ծաղիկը, որ երբէք չի թառամիլ։

Եթէ սովորեցաք մի նոր պատմութիւն՝ ուրեմն ձեռք բերիք թանկագին ադամանդը։

Ուստաք դուք մի օտար լեզու՝ ուրեմն տիրեցիք մի ամբողջ թագաւորութեան։

Բայց զգոյշ կացէ՛ք քարերից, դաշոյններից, (դուք անշուշտ հասկացաք Ահմէդի խօսքերը). այս առարկաները, — վատ գործերի յիշատակները, — կը ծանրաբեռնեն ձեր տոպրակը եւ բեռնի ծանրու-

Թիւնից դուք չէք կարողանալ այս գեղեցիկ երկրում արած ճանապարհորդութեան պտուղները վայելել։

Ծախվում է յոգուտ Աղէքսանդրապոլու Վիճակային—Հոգեւոր դպրոցի «Աշակերտական գրադարանին»:

Գինն է 10 կոպ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0242269